ՎԼԱԴԻՄԻՐ ԼԻՊԱՐԻՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության
ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

ՀՀ ԳԱԱ Մ.ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 10-ԱՄՅԱ (2006-2016ԹԹ.) ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԳԻԾԸ

Հարկ է նշել, որ 2006թ.-ից ՀՀ ԳԱԱ տնտեսագիտության ինստիտուտի[1] տարեգրության մեջ սկսվեց մի նոր շրջափուլ, երբ ՀՀ կառավարության որոշմամբ տնտեսագիտական ուղղվածություն ունեցող առանձին ոլորտներին համահունչ (ՀՀ ֆինանսների, էկոնոմիկայի ու գյուղատնտեսության նախարարություններ, ՀՀ կառավարությանն առընթեր պետական գույքի կառավարման վարչություն) երեք գիտահետազոտական ինստիտուտները՝ տնտեսագիտական հետազոտությունների ինստիտուտ, գյուղատնտեսության էկոնոմիկայի գիտահետազոտական ինստիտուտ, կառավարման և տնտեսական բարեփոխումների ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպությունները վերակազմակերպվեցին և միացվեցին ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվ. տնտեսագիտության ինստիտուտ պետական ոչ առևտրային կազմակերպությանը և որի արդյունքում ձևավորվեց վերոնշյալ անվանմամբ ինստիտուտը, իսկ որպես տնօրեն ընտրվեց Վլադիմիր Լիպարիտի Հարությունյանը՝ սկիզբ դնելով միացյալ ինստիտուտի նոր կոլեկտիվի կազմավորման գործընթացին, ինչպես նաև նորացված գիտական խորհրդի, գիտակազմակերպչական նոր կառուցվածքի ու գիտական նոր ուղղությունների ձևավորմանը: Այնուհետև ինստիտուտի հետագա 10-ամյա գործունեությունը բնորոշվեց որոշակի առանձնահատկություններով, որոնցից արժանահիշատակ են հետևյալները.

- հետազոտվող գիտական թեմաներին տրվում է առավել շատ գործնական ուղղվածություն, որոնց եզրակացություններն ու առաջարկությունները ներկայացվում են ՀՀ կառավարությանը՝ վերջինիս կողմից մշակվող հայեցակարգային ու ռազմավարական փաստաթղթերում դրանք հաշվառելու ու ներառելու ակնկալիքով,
- հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման հիմնախնդիրներին նվիրված հանրապետական ամենամյա գիտաժողովների անցկացումը,
- ինստիտուտի գիտական ներուժի երիտասարդացումը,
- հրատարակչական գործի նորովի կազմակերպումը:

Վերոնշյալներին համահունչ, այսօր մակրոտնտեսական հիմնախնդիրների, տնտեսության իրական, ֆինանսական ու ծառայությունների ոլորտի զարգացման, սոցիալական և ժողովրդագրական, տեսական հետազոտությունների և տնտեսագիտական մտքի պատմության գիտական ուղղությունները և դրանց արդյունքները հանրապետության տնտեսագետ մտավորականության համար դարձել են ինստիտուտի կողմից հրապարակվող ժողովածուում որպես հրատարակության հանդես:

Ֆինանսական հիմնախնդիրներն իրենց վերլուծական խորացումներն են ստացել գրքերի ձևով հրապարակված հետևյալ հետազոտություններում՝

1. Հարությունյան Վ., Ազիզյան Ա., Ֆինանսական համահարթեցման հիմնախնդիրները (2008թ.):
2. Հարությունյան Վ., Թամազյան Ա., Համայնքների սոցիալ-տնտեսական զարգացման և ֆինանսական հիմնախնդիրների լուծման ուղիները (2008թ.):
3. Հարությունյան Վ.Լ., Հարությունյան Դ.Վ., Հարությունյան Տ.Վ., Հարկեր և հարկագանձում (2010թ.):

---

[1] Ինստիտուտը ստեղծվել է դեռևս 1955-ին, երբ Հայկական ՍՍՀ գիտությունների ակադեմիայի կազմում գործող տնտեսագիտական սեկտորը վերակազմավորվում է տնտեսագիտության ինստիտուտի (տնօրեն՝ Ա.Մարուխյան)՝ սկզբնավորելով ինստիտուտի տարեգրությունը, իսկ 1999թ. վերջինս անվանակոչվում է Մ.Քոթանյանի անվամբ, ով մինչ այդ եղել էր ինստիտուտի տնօրենը: Նշենք, որ մինչ ակադեմիկոս Մ.Քոթանյանը, ինստիտուտի տնօրեն, սկսած 1960թ.-ից եղել է ակադեմիկոս Արտաշես Առաքելյանը, իսկ Մ.Քոթանյանից հետո ինստիտուտի տնօրեն է աշխատել (սկսած 1999-ից) ակադեմիկոս Վլադիմիր Խոջաբեկյանը:

4. Հարությունյան Տ.Վ., Հարկման և հարկային վարչարարության արդյունավետության բարձրացման ուղիները Հայաստանի Հանրապետությունում (2014թ.):
5. Կիրակոսյան Գ., Հարությունյան Տ., Հարկային բեռի արդարացի բաշխման և վարչարարության բարելավման հիմնախնդիրները ՀՀ-ում (2014թ.):
6. Բայադյան Ա., Մարկոսյան Հ., Պետական պարտքի կառավարման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները Հայաստանի Հանրապետությունում (2015թ.):

Ինստիտուտի հետազոտությունների մի բաժինն էլ վերաբերում է համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամի խնդիրներին, որոնց մասնավորապես վերաբերում են հետևյալ աշխատությունները.

1. Հարությունյան Վ., Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամ. պատճառներ, հակաճգնաժամային միջոցառումներ և դասեր (2009թ.):
2. Հարությունյան Վ., Խաչատրյան Վ., Ճգնաժամ. մակրոտնտեսական իրավիճակն աշխարհում և Հայաստանում (2010թ.):
3. Հարությունյան Դ.Վ., Բաղալյան Ա.Գ., Հակաճգնաժամային միջոցառումները և մակրոտնտեսական հիմնական ցուցանիշների փոփոխության միտումները (2014):

Տնտեսության իրական հատվածի ուսումնասիրություններն ընդգրկում են ՀՀ գյուղատնտեսական արտադրությունը, լեռնահանքային արդյունաբերությունը, արտաքին տնտեսական կապեր, որոնց վերաբերյալ հրատարակվել են հետևյալ հետազոտությունները.

1. Թորոսյան Թ., Հայաստանի և Եվրամիության միջև առևտրատնտեսական կապերի կատարելագործումը (2010թ.):
2. Ավագյան Հ., Լեռնահանքային և մետալուրգիական արդյունաբերությունների զարգացման ուղիներն ու հեռանկարները Հայաստանի Հանրապետությունում (2011թ.):
3. Ղազարյան Ս., Ղազարյան Է., Փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ու պետական աջակցության համալիր միջոցառումների իրականացումը ՀՀ գյուղատնտեսության ոլորտում (2012թ.):
4. Թորոսյան Թ., Հայաստանը և Թուրքիան տարածաշրջանային տնտեսական ինտեգրման գործընթացներում (2012թ.):
5. Բայադյան Ա., ՀՀ գյուղատնտեսական արտադրության զարգացման հիմնախնդիրները և դրանց լուծման ուղիները (2013թ.):
6. Ավագյան Հ., ՀՀ լեռնահանքային արդյունաբերության հանքահարստացման թափոնների և դրանց էկոլոգիական հետևանքների գնահատումը (2013թ.):
7. Զատիկյան Ա., Դանիելյան Ա., ՀՀ փոքր և միջին ձեռնարկությունների գործունեության կարգավորման ուղիները ֆինանսատնտեսական ճգնաժամի պայմաններում (2014թ.):
8. Ավագյան Հ., ՀՀ հանքավայրերում առկա պիրիտ հանքանյութի և դրա հարակից բաղադրիչների փոշիացումը կանխելու ուղիներն ու հեռանկարները (2014թ.):
9. Բայադյան Ա., Ֆինանսական միջոցների կազմավորման, օգտագործման և բարելավման ուղիները ՀՀ ագրարային ոլորտում (2016թ.):

Հետազոտություններ են կատարվել մարդկային կապիտալի, մարդկային հասարակության էության բնութագրման ու ձևավորման, գիտության դերի վերաբերյալ (Բ.Եղիազարյան):

Որպես զարգացման և տնտեսական աճի վերաբերյալ նոր համակարգի մշակման անդրադարձ պիտի դիտել «Գիտակրթական համակարգը և տնտեսական զարգացումը» հեղինակային կոլեկտիվի (հեղ. Յու.Սուվարյան, Վ.Հարությունյան, Վ.Սարգսյան, Վ.Խաչատրյան, 2011թ.) և «Գիտակրթական համակարգի կառավարման ռազմավարությունը» (2013թ., հեղ. Յու.Սուվարյան, Վ.Հարությունյան, Վ.Սարգսյան, Վ.Խաչատրյան), Յու.Սուվարյանի «Տնտեսագիտություն, գիտություն, կրթություն» (2014թ.) ուսումնասիրությունները: Կառավարչական մտքի պատմության հարցերն են դիտարկվում Յու.Սուվարյանի և Վ.Միրզոյանի «Հանրային կառավարման տեսություն և պատմություն» (2013թ.) մենագրության մեջ:

1990-ական թվականներին ինստիտուտում դադարել էր զործել տնտեսական պատմության և տնտեսագիտական մտքի պատմության բաժինը, որը վերաբացվեց միացյալ ինստիտուտի

ժամանակ և սկզբնավորեց այդ ուղղությամբ նոր հետազոտությունների իրականացումը, որոնց արդյունքում հրատարակվեցին

1. Սարինյան Ռ., Ալեքսեյ Ջիվելեգովի տնտեսագիտությունը (2008թ.),
2. Սարինյան Ռ., Աղայան Մ., Նշանավոր տնտեսագետների տողանը, հետքեյնսյան շրջան (2009),
3. Հարությունյան Վ., Սարինյան Ռ., Աղայան Մ., Հայ տնտեսագետներ (2010թ.),
4. Հարությունյան Վ., Սարինյան Ռ., Նշանավոր տնտեսագետների տողանը (մինչքեյնսյան շրջան (2012թ.),
5. Սարինյան Ռ., Ուրվագիծ արդի հայ տնտեսագիտական մտքի պատմության, երկու գրքով (2014թ.):

Ինստիտուտը լույս է ընծայել Աշոտ Բայադյանի «Տնտեսագիտական բառարանը» (2014), որն օգտակար ուղեցույց է ոչ միայն ուսանողների ու ասպիրանտների, այլև գիտաշխատողների, գործարար աշխարհի մարդկանց ու դասախոսների համար:

Ամփոփելով միացյալ ինստիտուտի 10-ամյա գիտական հետազոտությունների համառոտ արդյունքները, կարող ենք փաստել այն, որ ինստիտուտի կողմից, ընդհանուր առմամբ, հրատարակվել է.

Գիտական հոդվածների 16 ժողովածու,

88 գիրք,

1294 հոդված (այդ թվում 82 միջազգային):

Սույն հոդվածը, ըստ էության ուրվագծում է անցած տասը տարիների ինստիտուտի հրապարակումներն ըստ հետազոտական ուղղությունների: Դրանց տեսական և կիրառական հարցերի առաջադրվող լուծումներն առավել հանգամանալից քննության են ենթարկվել Վ.Հարությունյանի և Ռ.Սարինյանի հրապարակած «Տնտեսագիտության ինստիտուտը 10 տարում. 2006-2016թթ.» մենագրության մեջ (ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատարակչություն, 2016):

ՀՀ ԳԱԱ Մ.ՔՈԹԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ 10-ԱՄՅԱ (2006-2016ԹԹ.) ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԳԻԾԸ

ՎԼԱԴԻՄԻՐ ԼԻՊԱՐԻՏԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, *տ.գ.դ., պրոֆեսոր*
ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան տնտեսագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ

Համառոտագիր

Հոդվածում համառոտակի ներկայացված է ինստիտուտի 10-ամյա (2006-2016թթ.) գիտական հետազիծը, որում մասնավորապես ներկայացված են ինստիտուտի 10-ամյա գիտական գործունեության առանձնահատկությունները, ինստիտուտի գիտական ուղղությունները և ըստ գիտական ուղղությունների հրապարակված գիտական հետազոտությունները՝ գրքերի և մենագրությունների ձևով, իսկ վերջում համառոտ ձևով ամփոփված են միացյալ ինստիտուտի 10-ամյա գիտական հետազոտությունները, որոնցում առանձնացված են հրատարակված գրքերը, գիտական հոդվածների ժողովածուները և գիտական հոդվածները (այդ թվում արտասահմանյան):

Բանալի բառեր. *միացյալ ինստիտուտ, գիտական հետազիծ, գիտական ուղղություն, գիտական հոդված, հոդվածների ժողովածու:*

ВЕКТОР РАЗВИТИЯ НАУЧНЫХ ИССЛЕДОВАНИЙ ИНСТИТУТА ЭКОНОМИКИ ИМ. М. КОТАНЯНА НАН РА ЗА 10-ЛЕТНИЙ ПЕРИОД (2006-2016 ГГ.)

ВЛАДИМИР ЛИПАРИТОВИЧ АРУТЮНЯН, *д.э.н., профессор*
директор Института экономики им. М.Котаняна НАН РА, член-корр. НАН РА

Аннотация

В статье представлен обзор вектора развития научных исследований института за 10-летний период (2006-2016 гг.). В частности, представлены особенности 10-летней научной деятельности института, научные направления института и опубликованные по научным направлениям научные исследования в форме книг и монографий. В статье в краткой форме обобщены также результаты научных исследований объединенного института за последние 10 лет, среди которых выделены опубликованные книги, сборники статей и научные статьи, в том числе, опубликованные в зарубежных изданиях.

Ключевые слова: *объединенный институт, научный вектор, научное направление, научная статья, сборник статей.*

A DECADE-LONG (2006-2016) SCIENTIFIC OUTLINE OF M. KOTANYAN INSTITUTE OF ECONOMICS OF THE NATIONAL ACADEMY OF SCIENCES OF ARMENIA

VLADIMIR LIPARIT HARUTYUNYAN, *Doctor of Sciences (Economics), Professor*
Director, M. Kotanyan Institute of Economics, National Academy of Sciences, Republic of Armenia
Corresponding Member, National Academy of Sciences, Republic of Armenia

Abstract

The article, in short, provides a decade-long (2006-2016) scientific outline of the Institute: characteristics of a decade-long scientific activity of the Institute, research directions of the Institute and publications produced as a research outcome of each research direction: books and collections of articles, in particular, and at the end, various research studies of a decade-long history of the united institute are shortly summarized, by highlighting the books, collections of articles, and scientific articles published (including those articles published in various overseas journals as well).

Keywords: *United institute, scientific outline, research direction, scientific article, collection of articles.*